

«ԳՐԻՉ»ՆԵՐՈՒ ՏՄԺԱՆՔԸ

«Դուք չէք գիտեր, թէ գրչութիւնը ի՞նչ պէս մի յոգնեցնող տաժանք է: Գրչութիւնը մարդս քայքայող, տրորող մի տարապարհակ է: Անորմով քամակդ կը կորանայ, կուզդ կ'ելլէ, տեսողութիւնդ կը մթազնի, կը կոտորտին կողերդ եւ ստամոքսդ...»

Կարո՞ղ էք երեւակայել, թէ ի՞նչ սարսափ է ձեռնարկելը գրչագրի մը, որուն մէջ նկարուած են ոչ տասնեակ այլ հարիւրաւոր պատկերներ:

Lecoy կ'ըսէ. «Ducange-ի բառարանում illuminatio բառի ղիմաց կը կարդանք՝ 1097 թուին երկու հասարակ գրչագրիներու ընդօրինակութիւնը եւ ծաղիկը եւ կազմելու գործը առեր է չորս տարի ժամանակ»: Սա դեռ նըւազագոյն երկար ժամանակն է...:

*

Գրչութեան գործը վախճանի հասցնելը դեռ չէր նշանակեր, որ ամէն ինչ աւարտած է: Դեռ կը մնար վերստուգութիւնը, սրբագրութիւնը, որ խիստ հետեւողականութեամբ կը կատարուէր «ընդ հսկողութեամբ հմուտ մէկ միտքանի»: Մինչ այս լրացուցիչ աշխատանքը՝ գործը աւարտած չէր համարուէր:

Չնայած այսքան զգուշաւորութեան եւ հետեւողական խնամքի՝ մեզ հասած գրչագիրները կը պարունակեն անհամար սխալներ:

ԱՂՔԱՏ ԳՐԻՉ ԵՒ ՆԿԱՐԻՉ

«Անմեղադիր լերուք վասն սխալանացն, զի օրինակն ի ջուրն անկեալ եւ երկու ներքին լուսանցքն կպէր» «Վեներա. Ձեռ. էջ 931):

*

«Սխալանացս անմեղադիր լերուք, զի օրինակ չկար, որն գրաւ եւ որն մնաց, քանզի փտեալ էր» «Վեներա, Հ. Տաշ. էջ 260):

*

«Օրինակս եղծած է, փտել, մագաղաթ է եւ ոչ կարեմ վերծանել» «Վեներա. Ձեռ. էջ 162):

*

«Անմեղադիր լերուք սխալանաց որ ի սմա, զի յոյժ աւերեալ էր» «Վասպ. Ձեռ. Ե. Լաւրա., էջ 134):

*

«Օրինակ թիւր էր որ գրեցի, այլ զիրք առի եւ տեսայ շատ պակաս գտայ յառաջին օրինակն»:

*

«Անմեղադիր լերուք սխալանաց, յօրինակէ խիստ գապունութիւն քաշեցաք» «Վեներա. Ձեռ. էջ 312):

*

«Թողութիւն շնորհեցէք սխալանացս, զի օրինակն շուտով կ'ուզէին, շատ գաղտուկ եմ գրել» «Վեներա, Հ. Տաշեան, էջ 942):

*

«Մինչեւ ի վարդավառին փոխն գրեցի զօրինակն արուցս առան, մինչեւ ի վերջն այլ օրինակէ գրեցաւ (Գ. եղսկ. Սրուանծ., Թորոս Աղբար, էջ 229):

Պատահեր է, որ գրչագրողը ոչ իսկ մէկ օրինակ չէ կարողացեր ձեռք ձգել. այսպիսի անբախտ մը կ'ըսէ:

«Զի ոչ կայր օրինակ. եւ յոյժ վշտացեալ վասն օրինակի որ ոչ գոյր եւ իմ առեալ գտեարակն աստ եւ անդ բազում աշխատութեամբ գրէի» «Վասպ. Ձեռ. Ե. Լաւրա., էջ 143):

*

«Ժամանակս ձեռնային էր եւ հիւս. սաստիկ եւ տեղիքս լեռնային»:

*

«Աշխարհին ձեռն խիստ է եւ հաւան չէ գրագրին լայեխ» «Վեներա Ձեռ. էջ 885):

*

«Ով մանկունք, անմեղադիր լերուք որպէս գրիս, խիստ ձեռն մեծ է, ձուն է, պաղ է, ցուրտ է» (Հ. Տաշեան, էջ 800):

*

«Ատոմ գրչին ձեռիկը կու մրսէր ի գրելն» (Հ. Բ. Ս. Վեներա. էջ 846):

*

«Պօղոս կարգաւորին թանաքը կու սառէր» (Ալիշան, Սխուան, էջ 292):

*

«Տես թէ քանի աշխատեցայ, ես մխիթար գրիչ սորա, Թուղթս անկոկ ու գրիչ չկայ, Աւուրքս ցուրտ եւ պարզկայ, Չարտախս բարձր ու կրակ չկայ»: